# ԱԶԴԱԿ
## ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

1500 Լ.Ո. 94-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 162 (26434) ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020 4 ԷՋ


### *ՓՈՄՓԷՕ.* «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԲՌՆՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԴԱԴՐԵՑՆԵԼ»

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփէօ կոչ ուղղած է դադրեցնելու Լեռնային Ղարաբաղի մէջ բռնութիւնը եւ վերադառնալու բանակցութիւններուն: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը: Փոմփէօ Կրետէ կղզիին վրայ Միացեալ Նահանգներու ռազմակայան այցելութեան ժամանակ Յունաստանի վարչապետ Քիրիաքոս Միցոթաքիսի հետ ունեցած է մամլոյ ասուլիս մը, որ ուղիղ եթեր հեռարձակուած է յունական «Ի.Առ.Թի.» պետական պատկերասփիւռի կայանէն: «Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցող բռնութիւնը պէտք է դադրեցնել: Բոլոր կողմերը պէտք է իրենց ներդրումը ունենան խաղաղ լուծում գտնելու հարցին մէջ», ըսած է Փոմփէօ:

# ԹՐՔԱԿԱՆ «ԷՖ-16» ՕԴԱՆԱՒ ՄԸ ԿԸ ԽՈՑԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՕԴՈՒԺԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ «ՍՈՒ-25» ՏԻՊԻ ՕԴԱՆԱՒԸ

## ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԸ, ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՏԱՐԲԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԷ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

29 սեպտեմբերին եւս, մարտերը յատկապէս թէժ եղան Արցախի հիւսիսային եւ հարաւային ուղղութիւններուն մէջ: Ըստ հայկական պաշտօնական տուեալներուն, հայկական կողմը օրուան ընթացքին արձանագրեց զգալի յաջողութիւններ եւ խոցեց զինուժ եւ կենդանի ուժ:

Արցախի պաշտպանութեան բանակի փոխհրամանատար Արթուր Սարգսեան 29 սեպտեմբերի երեկոյեան յայտնեց, որ նոյն օրը արցախեան-ազրպէյճանական սահմանագիծի մարտական գործողութիւններուն ընթացքին Ազրպէյճան կորսնցուցած է աւելի քան 500 զինուոր, 17 հրասայլ, 4 զրահափոխադրիչ, 3 այլ ծանր զրահամեքենայ, 13 անօդաչու սարք:

Ան տեղեկացուց, որ ռազմաճակատի տարբեր ուղղութիւններով պաշտպանութեան բանակի ստորաբաժանումները արձանագրած են զգալի յաջողութիւններ՝ վերադարձնելով նախապէս կորսնցուցած որոշ դիրքեր:

Ըստ փոխհրամանատարին, թշնամին աշխուժ կերպով գրոհած է այն ուղղութիւնները, ուր նախապէս ունեցած է յաջողութիւններ, սակայն հայկական բանակը վճռականօրէն հակահարուած տուած է թշնամիին՝ ձախողեցնելով անոր յառաջխաղացքը բոլոր ուղղութիւններով:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մամլոյ քարտուղար Շուշան Ստեփանեան դիտել տուաւ, որ Ազրպէյճանական կողմը 29 սեպտեմբերի կանուխ առաւօտուն վերսկսած է լայնածաւալ յարձակողական գործողութիւնները Արցախի պաշտպանութեան բանակի պաշտպանական գիծի գրեթէ ամբողջ երկայնքին՝ առանձին ուղղութիւններով օգտագործելով SOU-1A ծանր հրանետային համակարգեր:

Շար.ը՝ էջ 2

### *ԻՐԱՆ ՎԱՐ ԱՌԱՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶՐՊԷՅՃԱՆ ՆԱԽԱՆԳԻ ՎԵՐԵՒ ԹՌԻՉՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆԾԱՆՕԹ ԹՌՉՈՂ ՍԱՐՔ ՄԸ

## «ՌՈՒՍԻՈՅ ԿՈՂՄԷ ՄԵՐ ՀՈՂԵՐՈՒՆ ՃԱՄԲՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԶԷՆՔ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ ՍՈՒՏ ԵՆ»

*Կ'ԸՍԷ ԹԵՀՐԱՆ*

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Սայիտ Խաթիպզատէ յայտնեց, թէ Ռուսիոյ կողմէ իրանեան հողերուն ճամբով Հայաստան զէնք փոխադրելու մասին պնդումները սուտ են:

Նախարարութիւնը նշեց, որ Իրանի իսլամական հանրապետութեան եւ դրացի երկիրներուն միջեւ բեռնակառքերու երթեւեկն ու քաղաքային ապրանքներու անցումը, սովորականին նման, միշտ ալ կան, եւ նշեալ բեռնակառքերը միայն այդ ծիրին մէջ կ'աշխատին»:

«Մինչ Իրան մօտէն կը հետեւի ապրանքներու դէպի այլ երկիրներ շարժումին, չ'արտօներ մեր երկրի հողերուն զէնքի եւ զինամթերքի փոխադրութեան համար օգտագործուիլը», յայտնեց Խաթիպզատէ:

Միւս կողմէ, Իրանի պետական պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ իրանեան ուժերը վար առած են Իրանի հիւսիսարեւմտեան, Հայաստանի եւ Ազրպէյճանի սահմանակից Արեւելեան Ազրպէյճան նահանգին վերեւ թռիչք կատարող անծանօթ անօդաչու թռչող սարք մը:

## ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ռուսիոյ Տուման երէկ հրապարակած է Լեռնային Ղարաբաղի իրավիճակին մասին յայտարարութիւն մը, որուն մէջ կողմերուն կոչ կ'ուղղէ՝ դադրեցնելու կրակոցը, ինչպէս նաեւ տագնապի խաղաղ լուծման համար միջնորդական օգնութիւն տրամադրելու պատրաստակամութիւն կը յայտնէ: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

Շար.ը՝ էջ 3

## ԶՈՒԻՑԵՐԻԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԾ Է ԻՐ ՏԱՐԱԾՔԻՆ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԻՒՐԸՆԿԱԼԵԼՈՒ

Պեռն մտահոգուած է 27 սեպտեմբերին Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ «սրած բախումներուն» մագլցումով: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով երկուշաբթի Զուիցերիոյ կողմէ հրապարակուած յայտարարութեան:

«Զուիցերիան կ'աջակցի ղարաբաղեան տագնապը բանակցութիւններու ճամբով լուծելու ուղղուած ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու ջանքերուն եւ պատրաստակամութիւն կը յայտնէ իր տարածքին մէջ Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ բարձր մակարդակի հանդիպումներ հիւրընկալելու», կը նշուի երկրի արտաքին գործոց նախարարութեան հրապարակած հաղորդագրութեան մէջ:

## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ *ՄԵՔԱՆԻԶՄ*ՆԵՐ ԿԱՆ, ԵՒ ՄՈՍԿՈՒԱՆ ԱՇԽՈՒԺ ԴԵՐ ՈՒՆԻ ԱՅԴ ՀԱՐՑԻՆ ՄԷՋ»

*Կ'ԸՍԷ ԶԱԽԱՐՈՎԱ*

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ իրավիճակի լուծման համար **մեքանիզմ**ներ կան, իսկ այդ գործին մէջ Մոսկուայի դերը աշխուժ է: Ան այս մասին ըսած է «Քոմսոմոլսքայա Փրաւտա» ձայնասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին:

Շար.ը՝ էջ 3

## ՔՐԵՄԼԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՄԻՒՍ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ՝ ԻՒՂ ՉԹԱՓԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԿՐԱԿԻՆ ՎՐԱՅ

Քրեմլին համոզուած է, որ Հայաստանին եւ Ազրպէյճանին զինուորական աջակցութիւն տրամադրելու՝ տարբեր երկիրներու կոչերը այս պահուս միայն իւղ կը լեցնեն Լեռնային Ղարաբաղի տագնապի կրակին վրայ: «Արմէնփրես»-ի համաձայն, ինչպէս կը յայտնէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը, այս մասին լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշած է Ռուսիոյ նախագահի մամլոյ քարտուղար Տմիթրի Փեսքով՝ աւելցնելով, որ պէտք է կողմերը համոզել՝ վերադառնալու հարցի քաղաքական եւ դիւանագիտական լուծման ուղի:

Շար.ը՝ էջ 2

## *ՆԱԽԱԳԱՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ.* «ՄԵՆՔ ՊԻՏԻ ՉԽՆԴՐԵՆՔ ԶԻՆԱԴԱԴԱՐ, ՄԵՆՔ ՊԻՏԻ ՊԱՐՏԱԴՐԵՆՔ ԶԻՆԱԴԱԴԱՐ»

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան Հայաստանի Հանրապետութեան փոխվարչապետ Տիգրան Աւինեանի հետ երէկ հանդիպում ունեցած է կամաւորականներու հետ:

Շար.ը՝ էջ 4

## ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ՝ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան բրիտանական «Պի.Պի.Սի.» կայանէն միջազգային հանրութեան կոչ ուղղեց՝ դատապարտելու Արցախի եւ Հայաստանի նկատմամբ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի յարձակումները:

Ան նշեց, որ արդէն 3 օր է Ազրպէյճանի զինուած ուժերուն կողմէ թիրախ դարձած են Արցախի խաղաղ բնակիչները, իսկ 29 սեպտեմբերին Հայաստանի խաղաղ բնակչութեան նկատմամբ յարձակումներուն ուղղակի միացած են նաեւ թրքական ուժերը:

Շար.ը՝ էջ 3

## ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԱԾ Է ՎԼԱՏԻՄԻՐ ՓՈՒԹԻՆԻՆ ՀԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին հետ:

Շար.ը՝ էջ 2

## ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ՈՒ ԱՐՑԱԽԻ ՀՁՕՐԱՑՄԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ՀԱՅՈՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է

**Երէկ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս հայ ազգին ուղղեց հետեւեալ կոչը.**

Վերջին երկու օրերու ընթացքին Ազրպէյճանի կողմէ Արցախի վրայ կատարուած զինուորական յարձակումը ողջ հայութիւնը կը հրաւիրէ իր ամբողջական զօրակցութիւնը յայտնելու հայոց բանակին, Արցախին ու Հայաստանին:

Աղօթարար՝
**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Շար.ը՝ էջ 2

## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ ՊՍԱԿԵԼՈՒ ԵՆՔ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ

29 սեպտեմբերին, նախագահութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի, Ս. Գայեանէ վանքին մէջ կատարուեցաւ Հանրապետական մաղթանք մեր հայրենիքի՝ Հայաստան եւ Արցախ աշխարհի խաղաղութեան եւ անսասանութեան համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի միաբաններու մասնակցութեամբ կատարուած մաղթանքի աւարտին Ամենայն Հայոց կաթողիկոսը հետեւեալ ուղերձը յղեց աշխարհասփիւռ հայ ժողովրդին:

«Սիրելի՛ զաւակներ Մեր ի Հայաստան, Արցախ եւ ի սփիւռս,

Շար.ը՝ էջ 3

## 13 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՉԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՄԻՋԵՒ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ ԿՆՔԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

29 սեպտեմբերին ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի նախաձեռնութեամբ, ՀՅԴ «Սիմոն Վրացեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ քաղաքական

Շար.ը՝ էջ 3

*ՀԱԿԱՌԱԿ ԵՐԵՒՈՒԹԱՊԷՍ ՏԵՂՔԱՅԼԻ ՄԹՆՈԼՈՐՏԻՆ*

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՃԻԳԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ՄԷԿԷ ԱՒԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Կառավարութեան կազմութեան գծով ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ մօտերս, գէթ յառաջիկայ շաբաթներուն, գործնական քայլեր չեն նախատեսւիր՝ սպասելով Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի ճշդած ժամկէտի աւարտին՝ նոյեմբերի կէսերուն, երբ արդէն յստակացած կ'ըլլայ ամերիկեան նախագահական ընտրութեան արդիւնքը: Այսուհանդերձ, նշեալ ժամանակէն օգտուելու եւ շուտափոյթ լուծման յանգելու մտադրութեամբ ճիգերը կը շարունակուին մէկի աւելի մակարդակներու վրայ՝ բացայայտօրէն թէ քուլիսներու ետին:

Այս իմաստով հոկտեմբերի վերջերը Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի Լիբանան տալիք այցելութեան նախապատրաստական քայլերու ծիրին մէջ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի Միջին Արեւելքի հարցերու ներկայացուցիչ Միխայէլ Պոկտանով վերջին 48 ժամերուն տեսակցեցաւ լիբանանցի զանազան պատասխանատուներու հետ, ինչպէս՝ արտաքին գործոց նախարարին, երեսփոխան Թալալ Արսլանի, նախկին երեսփոխան Ուալիտ Ժոմպլաթի եւ այլ պատասխանատուներու հետ:

Ամերիկեան «ճակատ»-ի վրայ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի Մերձաւոր Արեւելքի հարցերով օգնական Տէյվիտ Շինքըր իր կարգին կը ծրագրէ մօտիկ ապագային Լիբանան այցելել եւ սեղանի վրայ դնել իր «թելադրանք-պահանջները»: Միաժամանակ, լիբանանեան ծագումով ամերիկացի ծերակուտական Ճէյն Շահին առաջարկ մը ներկայացուցած է Նիւ Հեմբշայր նահանգին մէջ՝ Լիբանանը զերծ պահելու «Սեզար»-ի ամերիկեան պատժամիջոցներէն: Նախընթաց հանդիսացող այս քայլը կրնայ «փրկել» լիբանանցի որոշ պատասխանատուներ՝ անոնց սպառնացող ելեւմտական գայթակղութեանց բացայայտումէն:

Իր կարգին Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Պրուսօ Ֆուշիէ հրաժեշտի այցելութիւններ տուաւ նախագահ Առնէն ետք՝ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի եւ այլ պատասխանատուներու: Այս այցելութիւնները առիթ եղան խորհրդակցելու ֆրանսական նախաձեռնութեան յաջողութեան հաւանականութեան ու այս գծով առնուելիք քայլերուն շուրջ:

Արաբական առումով եւս «իրաւարար» ճիգերը կը շարունակուին: Այս գծով ուշագրաւ էր Եգիպտոսի դեսպանին խորհրդակցութիւնները լիբանանցի պատասխանատուներուն հետ, ինչպէս՝ նախկին վարչապետ Թամմամ Սալամ եւ ուրիշներ:

### ՆԱԵՒ՝ ՆԵՐՔԻՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱՅ

Արտաքին կողմերու նշեալ քայլերուն կողքին, հաղորդակցութիւնները կը շարունակուին նաեւ լիբանանեան մակարդակի վրայ, ուր նախագահ զօր. Միշել Աուն չէ դադրեցուցած իր կապերը զանազան կողմերու ներկայացուցիչներուն հետ՝ փորձերով լուծման յարմարագոյն տարազի ենթահողը պատրաստել, նախքան նշեալ ժամկէտներու աւարտը:

Նմանապէս հաղորդակցութիւնները «աշխուժ» են հոգեւոր պետերուն միջեւ: Այս իմաստով հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտել Լաթիֆ Տըրիան երէկ խորհրդակցութիւն մը ունեցաւ մարոնիներու Ռայի պատրիարքին հետ, ուր խօսակցութեանց առանցքը կազմեցին երկրի ընդհանուր իրավիճակն ու խնդրայարոյց տեսակէտներու մերձեցման ու համախոհութեան կարելիութիւնները:

## ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ՈՒ ԱՐՑԱԽԻ . . .

**Շարունակուած Ա. էջէն**

Խոր գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ հայոց բանակը ամուր վճռակամութեամբ կը շարունակէ հակադարձել Ազրպէյճանի յարձակումներուն:

Այս վճռադրոշմ պահուն, երբ մեր հայրենիքին անբաժան մասը կազմող Արցախը վտանգի ենթարկուած է, մեր ժողովուրդը Հայաստանի թէ սփիւռքի մէջ չի կրնար սոսկ զգացական սահմաններուն մէջ իր զօրակցութիւնը յայտնել:

Անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր հայ իր արեան կանչով եւ իր հայրենիքին նկատմամբ ունեցած անխախտ հաւատարմութենէն մղուած, գործնապէս իր օժանդակութիւնը բերէ հայոց բանակի առաւել հզօրացման:

Մենք մնայուն կապի մէջ ենք Հայաստանի ու Արցախի պետական իշխանութեան, ինչպէս նաեւ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հետ: Հայաստանի ու Արցախի մէջ զօրակոչ յայտարարուած է: Մենք եւս Մեր կարգին, հայրական կոչ կ'ուղղենք իւրաքանչիւր հայու ընդառաջելու համահայկական զօրակոչին՝ ինքզինք նկատելով Հայաստանի ու Արցախի պաշտպանութեան զինուոր: Կոչ կ'ուղղենք նաեւ մեր բոլոր թեմերուն, կազմակերպութիւններուն, ընտանիքներուն ու զաւակներուն, «Հայաստան» համահայկական հիմնադրամին ճամբով իրենց օժանդակութիւնը բերելու հայոց բանակի ու Արցախի հզօրացման:

Մեր ջերմ թելադրութիւնն է միանգամայն, որ մեր աղօթքներուն մէջ յիշենք հայրենիքի պաշտպանութեան ու հայ ժողովուրդի յաւերժութեան համար իրենց արիւնը թափելու պատրաստ մեր զինուորները: Հայցենք Բարձրեալն Աստուծմէ, որ շուտափոյթ ապաքինում պարգեւէ մեր վիրաւոր զինուորներուն ու հայորդիներուն, լուսաւորէ հոգիները նահատակ զինուորներուն եւ Իր երկնային հովանիին ներքեւ պահէ ու պահպանէ Արցախը, Հայաստանը եւ մեր համայն ազգը:

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական սիրով՝

*29 սեպտեմբեր 2020*
*Անթիլիաս, Լիբանան*

*ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԻՐ ՁՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ*

## ՍԷՅԻՏ ՀԱՍԱՆ ՆԱՍՐԱԼԼԱ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ

Հըզպալլայի ընդհանուր քարտուղար սէյիտ Հասան Նասրալլա երէկ, երեքշաբթի երեկոյեան արտասանած իր պատկերասփռուած ճառին մէջ անդրադարձաւ երկրի ընդհանուր իրավիճակին, վերջին իրադարձութիւններու լոյսին տակ յստակացնելով Հըզպալլայի կեցուածքը՝ կարգ մը հրատապ հարցերու գծով:

Առաջին հերթին Նասրալլա իր ցաւակցութիւնը յայտնեց Քուէյթի ժողովուրդին եւ ղեկավարներուն՝ Քուէյթի իշխան շէյխ Սապահ Ահմատ Ժապեր Սապահի մահուան առիթով: Ան բարձր գնահատեց հանգուցեալ իշխանին շինիչ դերը Լիբանանի պատերազմի աւարտին գծով:

Ապա ան որոշ հեգնանքով անդրադարձաւ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահուի «բացայայտումներուն»՝ Հըզպալլայի զինամթերքի վայրերուն գծով, Պէյրութի արեւմտեան արուարձաններէն Տահիէի մէջ եւ մամլոյ ներկայացուցիչները հրաւիրեց նոյնինքն երէկ գիշեր այցելելու Նեթանիահուի նշած դիրքերուն վայրը եւ ստուգելու ենթադրեալ զինամթերքի գոյութիւնը:

Ընդհանուր կացութեան գծով Նասրալլա յայտնեց, թէ յառաջիկայ շաբաթներուն կարեւոր իրադարձութիւններ տեղի պիտի ունենան:

Իսկ կառավարութեան գծով ան վերահաստատեց ֆրանսական նախաձեռնութեան Հըզպալլայի զօրակցութիւնը՝ ընդգծելով նախագահի իրաւասութիւններուն պահպանման կարեւորութիւնը: Ան նշեց, որ կարգ մը ժամանակաւոր դասաւորումներ հետզհետէ վերածուեցան անգիր օրէնքի: Նասրալլա դիտել տուաւ, որ նախկին վարչապետներու խմբակը կը միտէր կատարուած իրողութեան կառավարութեան ցանկ ներկայացնել եւ պարզապէս տեղեակ պահել մնացեալ խմբաւորումները, ներառեալ՝ Հըզպալլան, առանց անոնց կարծիքը առնելու:

Հըզպալլայի ընդհանուր քարտուղարը բարձր գնահատեց նշանակեալ վարչապետ Մուսթաֆա Ատիպի ցուցաբերած կեցուածքը, որ կը մերժէր «ճակատումի կառավարութիւն» ներկայացնել: Ան նաեւ գնահատեց նախկին վարչապետ Սաատ Հարիրիի զիջումի կեցուածքը՝ նշելով, որ Հըզպալլա արգելք չունի Հարիրիի կամ անոր կողմէ թելադրուած անձնաւորութեան մը նկատմամբ:

Սէյիտ Նասրալլա նաեւ անդրադարձաւ վերջերս երկիրը ցնցած ապահովական դէպքերուն, 4 օգոստոսին նաւահանգիստի պայթումէն մինչեւ Քաֆթունի, Մընիէի եւ Ուատի Խալեետի դէպքերուն եւ շեշտեց հետաքննութեանց արդիւնքներու շուտափոյթ բացայայտման կարեւորութիւնը:

## ԹՐՔԱԿԱՆ «ԷՖ-16» ՕԴԱՆԱՒ ՄԸ . . .

**Շարունակուած Ա. էջէն**

Աւելի ուշ ան տեղեկացուց, որ պաշտպանութեան բանակը խոցած է հակառակորդի զինամթերքով բեռնաւորուած մեքենաներու շարասիւն մը՝ արեւելեան ուղղութեամբ:

Ըստ անոր, պաշտօնական մակարդակով Ազրպէյճանի ներկայացուցած տուեալները՝ իբր թէ բարձրաստճան զինուորականներ զոհուած են, ու Մարտունիի զօրամասը ոչնչացած է, չեն համապատասխաներ իրականութեան:

Շուշան Ստեփանեան նաեւ յայտնեց, որ 29 սեպտեմբերի առաւօտեան Թուրքիոյ ռազմաօդային ուժերու «Էֆ-16» օդանաւի կողմէ Հայաստանի օդային տարածքին մէջ խոցուած է Հայաստանի բանակի ռազմաօդային ուժերու «ՍՈՒ-25» գրոհիչը: Թուրքիոյ ռազմաօդային ուժերուն պատկանող «Էֆ-16» կործանիչները օդ բարձրացած էին Ազրպէյճանի «Գեանջա» օդակայանէն եւ կ'ապահովէին Ազրպէյճանի «Դալեար» օդակայանէն Հայաստանի Վարդենիսի տարածաշրջանի Վարդենիս, Մեծ Մասրիկ, Սոթք շրջաններուն մէջ տեղակայուած Հայաստանի բնակավայրերու եւ զինուած ուժերու ցամաքային ստորաբաժանումներու ուղղութեամբ Ազրպէյճանի «ՍՈՒ-25» եւ թրքական արտադրութեան «Պայրաքթար» անօդաչու սարքով ռմբահրթիռային հարուածները:

Օդաչուն, ցաւօք, հերոսաբար նահատակուած է: Թուրքիոյ «Էֆ-16» կործանիչը, ըստ դիտարկման, գտնուած է 60 քմ խորութեան, 8200 մեթր բարձրութեան վրայ»:

Երէկ՝ 29 սեպտեմբերին տուած մամլոյ ասուլիսին ընթացքին Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան տեղեկացուց, թէ Արցախի նկատմամբ Ազրպէյճանի սանձազերծած լայնածաւալ ռազմական գործողութիւններուն ընթացքին հայկական կողմը ոչնչացուցած է թշնամիի 790 զինուոր, որոնցմէ 180-ը՝ Արցախի Քարվաճառի շրջանին ուղղութեամբ:

Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչը աւելցուց, որ այժմ մարտերը կը շարունակուին, հայկական կողմը յստակօրէն կը կատարէ իր մարտական խնդիրը:

Պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեանի համաձայն, Վարդենիսի ուղղութեամբ հակառակորդը կիրարկած է անօդաչու թռչող սարքեր եւ օդուժ: Վերջինը կիրարկուած է մարտական ուղղութիւններով:

Վարդենիսի մէջ թշնամիի գործողութիւններուն իբրեւ հետեւանք զոհեր ու վիրաւորներ չեն արձանագրուած: Ան յիշեցուց, որ մարտերու առաջին օրը եւս Վարդենիսը թիրախ դարձած էր, այդպիսով Հայաստանի Հանրապետութեան տարածքը թիրախաւորուած էր:

Վարդենիսի մէջ թիրախ դարձաւ նաեւ քաղաքացիական մարդատար մը, որ ամբողջութեամբ այրեցաւ:

Արցախի պաշտպանութեան բանակի հրամանատար Ջալալ Յարութիւնեան դատապարտեց թրքական «Էֆ-16»-ի կողմէ Հայաստանի զինուած ուժերու օդանաւի ջախջախումը՝ հաստատելով, որ բանակը պիտի դիմէ անհրաժեշտ ինքնապաշտպանական միջոցներու՝ հակամարտութեան գոտիին մէջ թրքական օդուժի գործողութիւններուն դէմ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մամլոյ բանբեր Աննա Նաղդալեան դիտել տուաւ, որ նախարարութիւնը հրապարակած է յայտարարութիւն՝ մատնանշելով, որ Ազրպէյճան ապատեղեկատուութիւն կը տարածէ՝ հող նախապատրաստելով Հայաստանի Հանրապետութեան Վարդենիսի շրջանին ուղղութեամբ մարտական գործողութիւններու ձեռնարկման: Ան հերքեց Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան Հայաստանին ուղղուած մեղադրանքը՝ Հայաստանի Հանրապետութեան Վարդենիսի շրջանէն Ազրպէյճանի Դաշքեսանի շրջանը հրթիռակոծելու վերաբերեալ:

## ՔՐԵՄԼԻՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՄԻՒՍ . . .

**Շարունակուած Ա. էջէն**

«Քրեմլինի մէջ նախ եւ առաջ կարեւոր կը նկատեն կրակոցի եւ զինուորական գործողութիւններու անյապաղ դադրեցումը: Որեւէ յայտարարութիւն՝ կողմերէն որեւէ մէկուն զինուորական աջակցութիւն ցուցաբերելու, հաստատօրէն իւղ կը լեցնէ կրակին վրայ: Մենք կտրականապէս դէմ ենք ատոր», նշած է Քրեմլինի բանբերը:

Փեսքով նշած է, որ Ռուսիան մնայուն կապի մէջ է Երեւանի, Պաքուի եւ Անգարայի հետ, եւ Թուրքիոյ կոչ ուղղած է՝ ընելու ամէն բան, որպէսզի հակամարտող կողմերը համոզեն դադրեցնելու կրակոցը:

«Մենք կոչ կ'ուղղենք բոլոր երկիրներուն, յատկապէս մեր գործընկերներուն, այնպիսիներուն, ինչպիսին Թուրքիան է, ամէն բան ընելու, որպէսզի հակամարտող կողմերը դադրեցնեն կրակոցը եւ վերադառնան տագնապի խաղաղ լուծման հոլովոյթին», ըսած է Փեսքով:

Ռուսիոյ նախագահի մամլոյ քարտուղարը նշած է, որ իրենք մնայուն կապի մէջ են նաեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի իրենց գործընկերներուն հետ, եւ, որ համանախագահ երկիրները պէտք է պատասխանատու դիրք գրաւեն Լեռնային Ղարաբաղի մէջ իրավիճակի կարգաւորման համար:

*ԱՐՑԱԽԻ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԱԶՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼՈՎ՝*

## ՎԱՐԴԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ. «ԱԶԱՏ ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՐՏԻՆ ԶՕՐԱՎԻԳ ԿԱՆԳՆԻԼ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ ԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ»

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնակատար Վարդինէ Օհանեան-Գէորգեան երէկ, երեքշաբթի, 29 սեպտեմբերին, անդրադառնալով արցախեան-ազրպէյճանական սահմանին ուղղութեամբ սանձազերծուած թուրք-ազրպէյճանական յարձակումներուն հետեւեալ գրառումը կատարեց «Թուիթըր»-ի իր էջին վրայ:

«Իւրաքանչիւր անհատ, քաղաքացի եւ ժողովուրդ հաստատ ու անվիճելի իրաւունքը ունի ապահովութեամբ ու խաղաղօրէն ապրելու իր երկրին մէջ, իր հողին վրայ՝ հեռու ծաւալապաշտ ախորժակներէ: Ապա ի՞նչ ըսել, երբ ան ակնյայտօրէն, անողորմ ու արիւնալի յարձակման կ'ենթարկուի իր տան եւ աշխատավայրին մէջ: Ազատ աշխարհի պետութիւնները պարտին զօրավիգ կանգնիլ իրաւունքին եւ արդարութեան, հեռու՝ դաշինքներէ եւ հաշիւներէ»:

*ԵՌՕՐԵԱՅ ՍՈՒԳ ՅԱՅՏԱՐԱՐԵԼՈՎ՝*

## ԼԻԲԱՆԱՆ ԿՈՐՄՆՑՈՒՑ ԲԱՐԵՐԱՐ ԲԱՐԵԿԱՄ՝ ՔՈՒԷՅԹԻ ԻՇԽԱՆ ՇԷՅԽ ՍԱՊԱՀ ԱՀՄԱՏ ԺԱՊԵՐ ՍԱՊԱՀԸ

Քուէյթի իշխան շէյխ Սապահ Ահմատ Ժապեր Սապահը երէկ մահացաւ, 91 տարեկանին: Անոր մահը տխրութեան եւ ցաւակցութեան լայն ալիք յառաջացուց իր սիրելիներուն եւ բարեկամներուն մօտ:

Լիբանանի մէջ պաշտօնական, կուսակցական թէ հոգեւոր բազմաթիւ ղեկավարներ խոր յուզմունքով գուժեցին անոր կորուստը՝ դրուատելով յօգուտ Լիբանանին անոր եղբայրական կեցուածքները:

Հանրապետութեան նախագահ, զօրավար Միշել Աուն երէկ գուժեց Քուէյթի իշխանին մահը՝ նշելով, որ ան Լիբանանի աւագ եղբայր էր եւ Լիբանանի կողքին կանգնած էր անոր դժուար պայմաններուն մէջ, նորոգելով շատ մը գիւղեր ու քաղաքներ:

Հրաժարեալ վարչապետ Հասսան Տիապ ցաւ յայտնեց Քուէյթի իշխանին մահուան առիթով եւ շրջաբերականով մը եռօրեայ պաշտօնական ընդհանուր սուգ յայտարարեց Լիբանանի մէջ:

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի նմանապէս գուժեց շէյխ Սապահ Ահմատ Ժապեր Սապահի մահը՝ դրուատելով Լիբանանի մատուցած անոր բազմաթիւ ծառայութիւնները:

Նախկին վարչապետ Սաատ Հարիրի հաղորդագրութեամբ մը ցաւ յայտնեց մեծ բարեկամի մը կորուստին համար, որ «ոսկիէ տառերով գրեց արաբական պատմութիւնը»:

Նմանապէս նախկին վարչապետներ Նեժիպ Միլաթի եւ Թամմամ Սալամ գուժեցին Քուէյթի իշխանին մահը՝ բարձր գնահատելով անոր արժանիքներն ու Լիբանանին ի նպաստ կեցուածքները:

*ՆՈՐԱՆՈՐ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ*

## ՔՈՐՈՆԱ ԺԱՀԸ ՎԱՐԱԿԵՑ 1105 ՊԱՐԱԳԱՅ ԵՒ ՊԱՏՃԱՌԵՑ ՀԻՆԳ ՄԱՀ

Ընդհանուր առողջապահութեան նախարարութիւնը երէկ յայտարարեց, թէ Լիբանանի մէջ «Քորոնա» ժահրի 1105 նոր պարագայ եւ 5 մահ արձանագրուած է՝ այսպիսով Լիբանանի մէջ վարակուածներուն ընդհանուր թիւը բարձրացնելով 38.363-ի:

Միւս կողմէ, սակայն, նորանոր դժուարութիւններ կու գան առաւել եւս բարդացնելու վարակուած պարագաներու դարմանումի միջոցները: Փաստօրէն, երկրին մէջ համապատասխան անկողիններու 80 առ հարիւր համեմատութիւնը արդէն իսկ գործածուած եւ սպառած է, ուստի յաւելեալ անկողիններու չգոյութիւնը կրնայ լուրջ դժուարութիւններու մատնել պատկան մարմինները:

Նմանապէս երբեմն վարակի ստուգման «Փի.-Սի.Ար.»-ի քննութեանց սխալ արդիւնքները նոյնքան մտահոգիչ երեւոյթ կը պարզեն: Այս գծով հետաքննութիւն բացուած է՝ ստուգելու սխալ արդիւնքներու պատճառները:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՀԵՌԱՁԱՅՆԱՅԻՆ...

**Շարունակուած Ա. էջէն**

Հայաստանի վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, թէ վարչապետը մանրամասն անդրադարձած է Ազրպէյճանի սանձազերծած ռազմական յարձակումին հետեւանքով տեղի ունեցող զարգացումներուն: Ռուսիոյ նախագահը խոր մտահոգութիւն յայտնած է շարունակուող ռազմական գործողութիւններուն կապակցութեամբ եւ կարեւոր նկատած զինադադարի դրութեան պահպանումն ու ապամագլցողականութեան ուղղութեամբ քայլերու իրականացումը:

## ՍՏՈՐԱԳՐԵԼ ԱՆՅԱՊԱՂ

Հայ յեղափոխական դաշնակցութեան Բիւրոյի նախաձեռնութեամբ, 7 եւ 8 մայիսի 2019-ին Ստեփանակերտի Ազգային ժողովի նիստերու դահլիճին մէջ գումարուեցաւ «Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինք»-ի ի նպաստ աշխատանքներու մեկնարկը յայտարարող խորհրդաժողով, որուն մասնակցեցան Հայաստանէն, Արցախէն եւ սփիւռքէն քաղաքական, ռազմական, փորձագիտական, հանրային շրջանակները ներկայացնող եւ այս գաղափարը բաժնող կողմնակիցներ:

Այս խորհրդաժողովի կազմակերպումով մեկնարկը կը տրուէր երկու հայկական պետութիւններու միջեւ համագործակցութեան համաձայնագիր կնքելու գործընթացին: Խորհրդաժողովը կ'ընդունէր հռչակագիր, կեանքի կը կոչուէր կազմկոմիտէ՝ գործնականացնելու համար հռչակագիրին մէջ տեղ գտած առաջադրանքները եւ պաշտպանելու Հայաստան-Արցախ ստորագրուելիք ռազմավարական դաշինքը: Այս նախաձեռնութիւնը կը նպատակադրէր նոր կարելիութիւն հաղորդել Արցախի քաղաքացիներու իրաւունքներու պաշտպանութեան եւ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման գործընթացին:

Խորհրդաժողովը այս դաշինքի պատշաճ իրաւական ամրագրումը պաշտպանելու համար կ'որոշէր.

Ա- Նախաձեռնել համահայկական աջակցութիւն ապահովելու գործընթացին:

Բ- Ձեւաւորել այդ աշխատանքները կազմակերպող մարմին:

Գ- Կոչ կ'ուղղէր Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեան օրէնսդիր եւ գործադիր իշխանութեան մարմիններուն՝ համապատասխան քայլերու ձեռնարկելու ու հնարաւոր սեղմ ժամկէտերով իրաւապայմանագրային յարաբերութիւններու բացը լրացնելու եւ համագործակցութեան պայմանագիր կնքելու:

Դժբախտաբար օրին համահայկական այս խիստ կարեւոր օրակարգին շուրջ կարելի չեղաւ ապահովել Հայաստանի օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց համապատասխան արագ արձագանգումը, հակառակ ՀՅ Դաշնակցութեան կողմէ կատարուած բազմաթիւ յիշեցումներուն եւ ներկայացուած պահանջներուն: Այսօ՛ր՝ այդ հռչակագիրի որդեգրման թուականէն մէկուկէս տարի ետք, 29 սեպտեմբեր 2020-ին, Հայաստանի Ազգային ժողովի մեծամասնութիւնը կազմող «Իմ քայլը» երեսփոխանական խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունց կը յայտարարէ. «Ստեղծուած կացութեան մէջ կը քննարկուի Արցախի հետ ռազմաքաղաքական դաշինքի կնքումը»:

Այս իմաստով արժէ՛ ըսել՝ ԼԱՒ Է ՈՒԾ, ՔԱՆ ԵՐԲԵՔ, մնացեալը բնական է, որ հայ քաղաքական միտքը եւ հայ անհատը կրնայ արժեւորել ու անհրաժեշտը եզրակացնել: Այսօ՛ր , 29 սեպտեմբերին,Հայաստանի մէջ 13 կուսակցութիւններ ՀՅ Դաշնակցութեան կեդրոնին մէջ համախմբուելով կոչ ուղղեցին՝ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեան իշխանութիւններուն միջեւ ռազմավարական դաշինքի կնքման՝ լուսարձակի տակ առնելով անոր անհրաժեշտութիւնը: Կը մնայ այս փուլին յուսալ ու ակնկալել, որ այս կոչը անյապաղ կը գտնէ իր արձագանգը: Այս փուլին համայն հայութեան դրսեւորած ամբողջական զօրակցութիւնը հերոսական Արցախին, անոր հերոսածին ժողովուրդին եւ հայոց բանակին, համալրուած այս դաշինքի ստորագրութեամբ, կրնայ երաշխաւորել պատերազմի յաղթանակը ու հայութեան իրաւունքներու ամրագրումը միջազգային հարթակի վրայ:

Վաղը այլեւս՝ հաստատ ո՛ւշ է . . .

**ՅԱԿՈԲ ՀԱՒԱԹԵԱՆ**

## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ . . . »

**Շարունակուած Ա. էջէն**

«Անհրաժեշտ է խնդիրին ընդհանուր լուծումներ գտնել, **մեքանիզմ**ներ կան: Մեր դերը թէ՛ իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ձեւաչափի ծիրին մէջ միջնորդ, թէ՛ իբրեւ Ազրպէյճանի հետ հասարակաց պատմութիւն ունեցող պետութիւն, բաւական աշխուժ է այս հարցին մէջ», շեշտած է Զախարովա:

Ան աւելցուցած է, որ իւրաքանչիւր երկիր պէտք է իր ներդրումը ունենայ տագնապի լուծման եւ ոչ թէ ատոր սրման գործին մէջ:

Անդրադառնալով լրագրողի հարցումին, թէ ինչո՞ւ Ռուսիան առաւել կտրուկ յայտարարութիւններ չի կատարեր, ինչպէս օրինակ Էրտողանը, Զախարովա ըսած է. «Որովհետեւ մենք Թուրքիան Չենք: Մեր մեթոտները տագնապներու լուծման գործին մէջ ունին իրենց պատմութիւնը: Մենք ունինք մեր դիւանագիտութիւնը, որ բազմիցս դրսեւորուած է լաւագոյն խաղաղապահական գործողութիւններով»:

## ՌՈՒՍԻՈՅ ՏՈՒՄԱՆ ՊԱՏՐԱՍՏ Է...

**Շարունակուած Ա. էջէն**

Ռուս երեսփոխանները «լուրջ մտահոգութիւն կը յայտնեն ղարաբաղեան տագնապի գօտիին մէջ իրավիճակի՝ մարդկային բազմաթիւ կորուստներու յանգեցուցած կտրուկ սրման առնչութեամբ եւ խստօրէն կը դատապարտեն ուժի կիրարկումը:

«Պետական Տուման կը յայտարարէ կրակոցի անյապաղ դադրեցման, շրջանին մէջ առճակատման սրացումէն հրաժարելու եւ իրավիճակը միայն խաղաղ ճամբով լուծելու անհրաժեշտութեան մասին: Երեսփոխանները կողմերուն կոչ կ'ուղղեն շուտափոյթ վերադառնալու բանակցային հոլովոյթին եւ պատրաստ են տրամադրելու միջնորդական օգնութիւն իրավիճակի կայունացման համար», կը նշուի բնագիրին մէջ:

## ԸՆԿԵՐՎԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԽՍՏՕՐԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԷ ՎԵՐՋԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՎՐԱՅ

Աշխարհի մեծագոյն երիտասարդական-քաղաքական կազմակերպութիւնը՝ Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւնը, որուն կ'անդամակցի ՀՅ Դաշնակցութեան երիտասարդականը, յատուկ յայտարարութիւններով խստօրէն դատապարտած է Արցախի վրայ ազրպէյճանական յարձակումը:

«27 սեպտեմբերի կանուխ առաւօտեան Ազրպէյճանը լայնածաւալ ռազմական յարձակումներ իրականացուցած է արցախեան-ազրպէյճանական շփման գօտիին մէջ, ինչպէս նաեւ ուղղակի յարձակումներու ենթարկուած է Ստեփանակերտի եւ այլ քաղաքներու խաղաղ բնակչութիւնը եւս: Ազրպէյճան կ'իրականացնէ այս գործողութիւնները՝ ոտնակոխելով Հայաստանի, Արցախի եւ Ազրպէյճանի միջեւ 1994-ին կնքուած հրադադարը, եւ «Քորոնա» ժահրի համավարակի ընթացքին համընդհանուր հրադադար հաստատելու՝ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարութեան վերջին կոչը:

Ամէնէն մտահոգիչ փաստը այն է, որ Թուրքիան լկտիաբար յայտարարած է Ազրպէյճանին իր լայնածաւալ օգնութեան մասին: Թուրքիան, ունենալով մարդու իրաւունքներու խախտումներու երկարատեւ պատմական փորձ, ինչպէս, օրինակ, բռնութիւնները քիւրտերու դէմ, ռազմական ներխուժումները Սուրիա եւ Լիպիա, Յունաստանի եւ Կիպրոսի դէմ եղած սադրանքները, կը շարունակէ վարել ռազմատենչ քաղաքականութիւն: Ե՛ւ Թուրքիան, ե՛ւ Ազրպէյճանը ոտնահարած են ժողովրդավարութեան սկզբունքները, տարիներ շարունակ ապակայունացուցած շրջանը եւ կը շարունակեն խախտել խաղաղութիւնն ու կայունութիւնը շրջանին մէջ:

Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւնը խստօրէն կը դատապարտէ Ազրպէյճանի կողմէ վերջին յարձակումը Արցախի վրայ եւ կը յորդորէ անմիջապէս դադրեցնել ռազմական գործողութիւնները, յատկապէս՝ խաղաղ բնակչութեան ուղղութեամբ: Պատմութիւնը ապացուցած է, որ ռազմական գործողութիւնը չի կրնար որեւէ կառուցողական բանի յանգեցնել, եւ երբեւէ ոչ մէկ կողմ պիտի շահի լայնածաւալ պատերազմէն:




Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւնը նաեւ կը դատապարտէ Թուրքիոյ յարձակողապաշտ դիրքորոշումը եւ անոր շարունակական անխոհեմ քայլերը, որոնք կը նպաստեն շրջանի ապակայունացման:

Միութիւնը լիայոյս է, որ տագնապի խաղաղ լուծումը կարեւոր է միայն լարուածութեան թուլացման եւ բանակցութիւններու վարման ճամբով՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն գլխաւորութեամբ, միջազգային իրաւունքի եւ 1975 թուականի Հելսինքեան համաձայնագիրներուն մէջ ամրագրուած սկզբունքներու հիման վրայ՝ բանակցային գործընթացի միջոցով:

Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւնը միջազգային հանրութեան կոչ կ'ուղղէ պահանջել ռազմական գործողութիւններու անյապաղ դադրեցում», նշուած է յայտարարութեան մէջ:

Ընկերվար երիտասարդներու միջազգային միութիւնը Ընկերվար միջազգայնականի ուղեկից երիտասարդական կազմակերպութիւն է, որուն կ'անդամակցին աւելի քան 143 կազմակերպութիւններ աշխարհի շուրջ 100 երկիրներէ: ՀՅԴ Երիտասարդականը Ընկերվար երիտասարդներու միջազգային միութեան լիիրաւ անդամ է:

## 13 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿՈՉԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ . . .

**Շարունակուած Ա. էջէն**

տասներեք կուսակցութիւններու խորհրդակցութիւն՝ քննարկելու համար 27 սեպտեմբեր 2020-ին, Թուրքիոյ բացայայտ աջակցութեամբ, Ազրպէյճանի կողմէ սանձազերծուած պատերազմին իբրեւ հետեւանք ստեղծուած կացութիւնն ու Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն միջեւ ռազմավարական դաշինք կնքելու անհրաժեշտութիւնը:

Խորհրդակցութեան մասնակցեցան Ազատութիւն, Ազգային օրակարգ, Ազգային ինքնորոշում միաւորում, Բարգաւաճ Հայաստան, Երկիր ծիրանի, Ժառանգութիւն, Լուսաւոր Հայաստան, Հայ յեղափոխական դաշնակցութիւն, Հայաստանի դեմոկրատական, Հայաստանի Հանրապետական, Հայաստանի քրիստոնէա-դեմոկրատական միութիւն, Յանուն սոցիալական արդարութեան, Մէկ Հայաստան կուսակցութիւնները, որոնք հետեւեալ կոչով դիմեցին Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու իշխանութիւններուն:

«2020թ. սեպտեմբերի 27-ին, Ազրպէյճանի կողմից, Թուրքիայի բացայայտ աջակցութեամբ եւ խրախուսմամբ սանձազերծած պատերազմը մէկ անգամ եւս շեշտեց Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների միջեւ ռազմավարական դաշինք կնքելու անհրաժեշտութիւնը:

Հիմք ընդունելով Հայաստանի անկախութեան մասին 1990 օգոստոսի 23-ի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակման մասին 1991թ. սեպտեմբերի 2-ի հռչակագրերը եւ արձանագրելով Արցախի ինքնիշխանութեան հռչակման ու դրան յաջորդած գործընթացի օրինականութիւնն ու համապատասխանութիւնը միջազգային եւ ներպետական իրաւական կառուցակարգերին,

Նկատի ունենալով՝

- Հայաստանի յանձնառութիւնը՝ երաշխաւորելու Արցախի ժողովրդի անվտանգութիւնն ու ինքնորոշման իրաւունքի իրացումը եւ անվտանգութեան ապահովման հետ կապուած հարցերում համաձայնեցուած գործողութիւնների անհրաժեշտութիւնը,

- բանակցային գործընթացի լիարժէքութեան եւ արդիւնաւէտութեան ապահովման առումով Արցախի Հանրապետութեան լիիրաւ մասնակցութեան անխուսափելիութիւնը,

- բանակցային գործընթացում Արցախի Հանրապետութեան անկախ կարգավիճակի, նրա տարածքային ամբողջականութեան վերականգնման եւ անվտանգութեան հետ կապուած հարցերի լուծման առաջնահերթութիւնը,

- մարդու հիմնարար իրաւունքների իրացման, անվտանգութեան, ռազմական համագործակցութեան, արտաքին քաղաքական գործունէութեան եւ բազմաթիւ այլ բնագաւառների հետ կապուած Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների իրաւայարաբերութիւնների՝ մինչ օրս լիարժէք կարգաւորուած չլինելու հանգամանքը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան իրաւապայմանագրային յարաբերութիւնները նոր մակարդակի բարձրացնելու անհրաժեշտութիւնը.

Մենք՝ ներքոյ ստորագրեալ կուսակցութիւններս, կոչ ենք անում Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան իշխանութիւններին՝ անյապաղ քայլեր ձեռնարկել երկու հանրապետութիւնների միջեւ ռազմավարական համապարփակ համագործակցութեան պայմանագիր կնքելու ուղղութեամբ»:

Նշուեցաւ նաեւ, որ յայտարարութիւնը բաց է միանալու համար:

## ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ . . .

**Շարունակուած Ա. էջէն**

Այսօր սրբազան այս տաճարի նուիրական կամարների ներքոյ համախմբուել ենք մեր հոգեւոր դասի եւ հաւատացեալների հետ՝ աղօթք առ Աստուած բարձրացնելու մեր հայրենիքի խաղաղութեան ու անվտանգութեան եւ մեր ժողովրդի ապահով կեանքի համար:

Արցախ աշխարհի ազատութիւնն ու անկախութիւնը, խաղաղ ու ստեղծագործ կեանքը, մեր սրբազան արժէքները պաշտպանելու գոյամարտն ենք վերստին մղում այս օրերին, նորօրեայ մեր պատմութեան այս վճռական պահին:

Անկախ ու ազատ ապրելու իրաւունքը աստուածապարգեւ շնորհ է, անվիճարկելի եւ անձեռնմխելի: Այդ իրաւունքի պաշտպանութեան համար մեր ժողովուրդը վճռական է ու հաստատակամ: Ինչպէս յաճախ մեր պատմութեան ընթացքին, այսօր էլ ազգս հայոց այլընտրանք չունի, քան զինուած դիմակայութեամբ արժանապատուօրէն պաշտպանելու իր կեանքն ու ազատութիւնը: Մենք մեր ժողովրդի հետ խստօրէն դատապարտում ենք Ազրպէյճանի սանձազերծած ռազմական գործողութիւնները Արցախի Հանրապետութեան դէմ, ինչպէս եւ ոտնձգութիւնները Հայաստանի սահմանների նկատմամբ: Ազրպէյճանի ռազմական գործողութիւնները, որ ընթանում են Թուրքիայի անվերապահ աջակցութեամբ, կասեցուում են աննկուն ոգով եւ աստուածապաւինութեամբ հայոց քաջարի բանակի մեր խիզախ զօրականների եւ զինուորների: Արդարեւ, «Տէրն է մեր օգնականն ու փրկութիւնը... եւ Տէրն է խորտակում պատերազմները» (հմմտ. Ելից 15.2-3): Սիրելինե՛ր, ճշմարտութիւնն ու արդարութիւնը մեր կողմն են, եւ մեր հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը Աստծոյ օգնականութեամբ եւ ողջ հայութեան միասնականութեամբ վերստին պսակելու ենք յաղթանակով: Մեզ ոգեշնչում է հայրենասիրական եւ յաղթական այն ոգին, որով մեր ժողովրդի զաւակները շտապում են լրացնել հայրենիքի պաշտպանների շարքերը եւ միաւորել ուժերն ու հնարաւորութիւնները՝ ի խնդիր անշրջելի յաղթանակի: Այսօր պահն է, որպէսզի ազգովի անվեհեր պայքարով մեր հայրենիքը պաշտպանենք թշնամուց եւ վկայենք մեր միասնականութեան ուժն ու ոգու անպարտելիութիւնը: Մեր հերոսական մաքառումները՝ արձանագրուած հայոց պատմութեան փառաւոր էջերին, ապացուցել են, որ ազգային համախմբումն ու միասնականութիւնն են յաղթանակներ կերտում եւ պարզում լուսաւոր հորիզոնները մեր գալիքի:

Սիրելի՛ զաւակներ Մեր, Հայրապետիս յորդորն ու պատգամն է՝ ամուր պահել հայրենանուիրումի եւ ազգանուիրումի ոգին, համախմբել համազգային մեր ողջ ներուժը՝ պաշտպանելու մեր հայրենիքը եւ թոյլ չտալու ոտնահարումը մեր ազգային արժանապատուութեան, թանկ գնով ձեռք բերուած մեր ազատութեան ու անկախութեան եւ ազգային մեր իրաւունքների:

Մեր ժողովրդի առջեւ յառնած այս փորձութեան յանդիման Մենք ուղերձներ ենք յղել պետութիւնների ղեկավարներին, մեր քոյր եկեղեցիների առաջնորդներին, կրօնապետերին եւ միջեկեղեցական տարբեր կազմակերպութիւնների ղեկավարներին: Ազրպէյճանի բռնատիրական ու յարձակողական ընթացքների դէմ կարեւոր են քաղաքակիրթ աշխարհի ջանքերը՝ տարածաշրջանում իրավիճակի կայունացման, խաղաղութեան եւ ստեղծագործ ու ապահով կեանքի վերահաստատման համար: Մարդկային կեանքերը սուրբ են ու աստուածապարգեւ, եւ դրանց նկատմամբ ոտնձգութիւնը՝ աստուածամերժութիւն: Խորապէս ցաւում ենք մեր ամէն մի զոհի եւ վիրաւորի համար: Կորով ու քաջասրտութիւն ենք մաղթում մեր զինծառայողների ծնողներին, շուտափոյթ ապաքինում՝ բոլոր վիրաւորներին, Սուրբ Հոգու մխիթարութիւնը՝ զոհուածների հարազատներին:

Ի խորոց սրտի հայցում ենք Աստծոյ Սուրբ Աջի հովանին ու զօրակցութիւնը մեր բանակի քաջարի զինուորներին, արցախահայ մեր խրոխտ զաւակներին, աշխարհասփիւռ մեր ողջ ժողովրդին: Թող Տիրոջ պահպանութիւնն ու օրհնութիւնը տարածեալ լինեն մեր հայրենեաց եւ համայն հայութեան վրայ»:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ. . .

**Շարունակուած Ա. էջէն**

«Օրեր առաջ Ազրպէյճանի ուժերը լայնածաւալ ռազմական գործողութիւններ սկսած են Լեռնային Ղարաբաղի հետ շփման գիծի ամբողջ երկայնքին: Մենք ատիկա կ'որակենք նախօրօք ծրագրուած յարձակում Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին նկատմամբ: Ազրպէյճանի զինուած ուժերը թիրախաւորած են Լեռնային Ղարաբաղի քաղաքներն ու գիւղերը, քաղաքացիական բնակչութիւնն ու ենթակառուցածքները: Այսօր նոյնը տեղի ունեցած է Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէջ գտնուող գիւղերու նկատմամբ: Այսօր Ազրպէյճանի զինուած ուժերը շարունակած են յարձակողական գործողութիւնները, շատ կարեւոր է նշել, որ Թուրքիոյ ռազմական սպաները տեղակայուած են Ազրպէյճան եւ ուղղակիօրէն ներգրաւուած են ռազմական գործողութիւններու մէջ, որոնց պատճառով տասնեակ մարդիկ զոհուած են, հարիւրաւորները՝ վիրաւորուած», նշած է վարչապետ Փաշինեան:

Հայաստանի վարչապետը յայտնեց, որ Հայաստանի եւ Արցախի նկատմամբ ոտնձգութիւններ կը կատարեն նաեւ Թուրքիոյ «Էֆ-16» ռազմական կործանիչները:

Անդրադառնալով Ազրպէյճանէն հնչող մեղադրանքներուն՝ իբր թէ հայկական կողմը սկսած էր ռազմական գործողութիւններուն՝ Փաշինեան նշեց, որ կատարուած մեղադրանքը պէտք է հիմնուած ըլլայ փաստերու վրայ:

Հայաստանի վարչապետը աւելցուց, որ Արցախի ժողովուրդը ունի ազատ ինքնորոշման իրաւունք, իսկ ամբողջ միջազգային հանրութիւնը պէտք է ստիպէ Թուրքիան՝ դուրս գալու այս հակամարտութենէն, որովհետեւ այս տագնապին մէջ անոր ներգրաւուածութիւնը աւելի կը վատթարացնէ վիճակը:

*ԱՐՑԱԽԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ՊԱՔՈՒՆ ԵՒ ԱՆԳԱՐԱՆ՝*

## «ԱՅՍ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ԲԼԼԱԼ ՄԻԱՅՆ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ»

*Կ'ԸՍԷ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ*

Եւրոպական խորհրդարանի փոխնախագահ, Եւրոպական Միութիւն- Հայաստան գործընկերութեան, Եւրոպական Միութիւն-Ազրպէյճան համագործակցութեան խորհրդարանական յանձնախումբերուն մէջ Եւրոպական Միութեան պատուիրակութեան անդամ Ֆապիո Մասիմօ Քասթալտո արցախեան տագնապի սրման լոյսին տակ յայտարարութիւն հրապարակած է: Այս մասին կը հաղորդէ Հայաստանի Ազգային ժողովի Եւրոպական համարկման հարցերու յանձնախումբի դիմատետրեան էջը:

«Խստօրէն կը դատապարտեմ շարունակուող բռնութիւնները եւ, մասնաւորաբար, ազրպէյճանական ուժերուն կողմէ Լեռնային Ղարաբաղի շրջանին մէջ իրականացուող զինուորական գործողութիւնները: Անխտիր զինուորական յարձակումի անընդունելի օգտագործումը, որ բազմաթիւ զոհերու եւ վիրաւորներու յանգեցուցած է նոյնիսկ խաղաղ բնակչութեան շրջանին մէջ, արմատապէս կը խաթարէ խաղաղութեան հոլովոյթի վերսկսման կարելիութիւնը», յայտարարած է Քասթալտո:

*ԲՐԻՏԱՆԻԱ ԵՒ ՔԱՆԱՏԱ ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆ.*

## «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՏԱԳՆԱՊԻ ՈՐԵՒԷ ԼՈՒԾՈՒՄ ՊԷՏՔ Է ՀԻՄՆՈՒԱԾ ԸԼԼԱՅ ԲՌՆՈՒԹԻՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԿԶԲՈՒՆՔԻՆ ՎՐԱՅ»

Բրիտանիոյ եւ Քանատայի արտաքին գործոց նախարարներ Տոմինիք Ռաապ եւ Ֆրանսուա Ֆիլիփ Շամփայն Լեռնային Ղարաբաղի մէջ հակամարտող կողմերուն կոչ ուղղած են անյապաղ դադրեցնելու կրակոցը եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ծիրին մէջ բանակցութիւնները վերականգնելու: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

«Քանատան եւ Բրիտանիան խորապէս մտահոգուած են Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտիին մէջ շփման գիծի երկայնքին լայնածաւալ զինուորական գործողութիւններու մասին հաղորդագրութիւններով: Բնակելի կէտերու հրետակոծութիւններու եւ քաղաքացիական բնակչութեան շարքերուն մէջ զոհերու մասին հաղորդագրութիւնները խոր մտահոգութիւններ կը յառաջացնեն: Մենք կոչ կ'ուղղենք անյապաղ դադրեցնելու զինուորական գործողութիւնները, հետեւելու քաղաքացիական բնակչութեան պաշտպանութեան եւ զինադադարի մասին համաձայնութեան», կը նշուի հրապարակուած յայտարարութեան մէջ:

Նախարարները նաեւ ընդգծած են, որ Լեռնային Ղարաբաղի մէջ տագնապի որեւէ լուծում պէտք է հիմնուած ըլլայ բռնութիւնը մերժելու սկզբունքին վրայ եւ ներառէ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ծիրին մէջ հաստատուած բանակցութիւններու միջոցով խաղաղ լուծում:

«Մենք կ'աջակցինք ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի աշխատանքին եւ ամբողջութեամբ կ'աջակցինք համանախագահներու երէկուան յայտարարութեան», կը նշուի միացեալ յայտարարութեան մէջ:

## ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆ ՔԼԱՐՔ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՐՑԱԽԻ ՎՐԱՅ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան անդամ Քեթրին Քլարք դատապարտած է Արցախի վրայ Ազրպէյճանի յարձակումը: Այս առընչութեամբ ան գրառում կատարած է իր թուիթըրեան պաշտօնական էջին վրայ:

Քոնկրեսականը նշած է. «Ազրպէյճանի կողմէ Արցախի դէմ հրահրուած եւ շարունակուող յարձակումները պէտք է դատապարտուին խստագոյն ձեւով: Նախայարձակումի այս գործողութիւնները արդէն կեանքեր խլած են եւ տեղի ունեցած են զինադադարի դրութեան խախտումէն ընդամէնը երկու ամիս ետք»:

## ԷՐՏՈՂԱՆ ԵՒ ՃՈՆՍԸՆ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան եւ Բրիտանիոյ վարչապետ Պորիս Ճոնսըն երկուշաբթի օր հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած են: Այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը՝ յղում կատարելով Թուրքիոյ նախագահի գրասենեակին:

Կը նշուի, որ հեռաձայնային հաղորդակցութեան ընթացքին քննարկուած են Թուրքիոյ եւ Բրիտանիոյ միջեւ յարաբերութիւններու կարգաւորման հարցերը, ինչպէս նաեւ շրջանային նիւթեր, որոնց շարքին՝ արեւելեան Միջերկրականի շրջանի հարցն ու Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ լարուածութիւնը:

## ՊՐԱԶԻԼԸ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ԱՆՅԱՊԱՂ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ԿՐԱԿՈՑԸ

Պրազիլի կառավարութիւնը մտահոգութեամբ կը հետեւի Լեռնային Ղարաբաղի շրջանին մէջ զինուորական առճակատման ընթացքին: ԹԱՍՍ լրատու գործակալութեան համաձայն, այս մասին կը նշուի Պրազիլի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ, որ հրապարակուած է նախարարութեան կայքին վրայ:

«Պրազիլի կառավարութիւնը մտահոգութեամբ կը հետեւի Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ զինեալ դիմակայութեան զարգացումներուն, որոնք սկսած են 27 սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտիի շփման գիծին վրայ: Պրազիլը կողմերուն կոչ կ'ուղղէ՝ անյապաղ դադրեցնելու զինուորական գործողութիւնները, յարգանք դրսեւորելու իրարու ազգային եւ կրօնական ինքնորոշման հանդէպ եւ վերադառնալու բանակցութիւններու համապատասխան հարցերու շուրջ», կը նշուի փաստաթուղթին մէջ:

Պրազիլի արտաքին գործոց նախարարութիւնը նաեւ խոր ափսոսանք յայտնած է մարդկային կորուստներուն համար:

## ՀԱՊԿ-Ն ԿԸ ՍՊԱՍԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՄՈՒՄԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԴԷՄ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՈՏՆԴԳՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ

Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) քարտուղարութիւնը կը սպասէ Հայաստանի դիմումին, որպէսզի քննարկէ Ազրպէյճանի կողմէ Հայաստանի բնակավայրերը թիրախաւորելու հարցը:

ՀԱՊԿ-ի մամլոյ քարտուղար Վլատիմիր Զայնեթտինով պատասխանած է, Արմէնփրես-ի այն հարցումին, թէ կազմակերպութիւնը արդեօք կը պատրաստուի՞ քննարկելու Ազրպէյճանի կողմէ Հայաստանի Հանրապետութեան խաղաղ բնակավայրերու հրետակոծութեան խնդիրը:

Որպէսզի այդ հարցը ՀԱՊԿ-ի մէջ քննարկուի, անհրաժեշտ է, որ Հայաստանը ՀԱՊԿ-ին դիմէ՝ համապատասխան խնդրանքով: Այդպիսի խնդրանք ՀԱՊԿ-ի քարտուղարութիւնը տակաւին չէ ստացած, ըսաւ Զայնեթտինով:

## «ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԷՏՔ Է ՇՓՄԱՆ ԳԻԾԻ ԵՐԿԱՅՆՔԻՆ ԱՒԵԼԻ ՇԱՏ ԴԷՏԵՐ ՆԵՐԳՐԱՒԵՆ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ԿՈՉ ՈՒՂՂԵՆ՝ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԱՆՊԱՏԿԱՌՕՐԷՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐՈՒՆ ԶԷՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ»

*Կ'ԸՍԷ ՊԱՅՏԸՆ*

Միացեալ Նահանգներ պէտք է շփման գիծի երկայնքին աւելի շատ դէտեր ներգրաւեն եւ Ռուսիոյ կոչ ուղղեն՝ դադրեցնելու անպատկառօրէն երկու կողմերուն զէնքի տրամադրումը: Այս մասին «Ամերիկայի ձայն»-ին հաղորդումով յայտնած է Միացեալ Նահանգներու նախագահի դեմոկրատական թեկնածու Ճօ Պայտընն՝ անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի մէջ զինուորական գործողութիւններու վերսկսման:

«Խորապէս մտահոգ եմ Լեռնային Ղարաբաղի մէջ զինուորական գործողութիւններու բռնկումին առիթով եւ կոչ կ'ուղղեմ անյապաղ նուազեցնելու լարուածութիւնը, վերականգնելու զինադուլը եւ վերսկսելու Հայաստանի ու Ազրպէյճանի միջեւ բանակցութիւնները:

«Միացեալ Նահանգներ պէտք է շփման գիծի երկայնքին աւելի շատ դէտեր ներգրաւեն եւ Ռուսիոյ կոչ ուղղեն՝ դադրեցնելու անպատկառօրէն երկու կողմերուն զէնքի տրամադրումը, նոյն ատեն վերատեսութեան ենթարկեն անվտանգութեան ուղղուած մեր սեփական ծրագիրները՝ վստահ ըլլալու համար, որ տրամադրուող որեւէ զինուորական միջոց յարձակումի համար պիտի չօգտագործուի», յայտնած է Պայտընն:

## ՄԵՐՔԵԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԵՒ ԱԼԻԵՒԻ ՀԵՏ ԶՐՈՅՑԻ ԸՆԹԱՑՔԻՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ԱՆՅԱՊԱՂ ԶԻՆԱԴԱԴԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ

Գերմանիոյ վարչապետ Անկելա Մերքել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ազրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ ունեցած է հեռաձայնային հաղորդակցութիւններ, որոնց ընթացքին քննարկած է Լեռնային Ղարաբաղի տագնապին սրումը: Ռուսական ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Գերմանիոյ կառավարութեան բանբեր Շթեֆեն Զայպերթ:

«Վարչապետը ընդգծած է կրակոցի անյապաղ դադրեցման եւ բանակցութիւններու սեղան վերադառնալու անհրաժեշտութիւնը», յայտնած է Զայպերթ՝ աւելցնելով, որ Մերքելի կարծիքով՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակը «յարմար ձեւաչափ» է այդ բանակցութիւններուն համար:

Գերմանիոյ կառավարութեան ներկայացուցիչին համաձայն, Մերքել նաեւ նշած է, որ «դրացի երկիրները պէտք է իրենց ներդրումը ունենան տագնապի խաղաղ լուծման գործին մէջ»:

## «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉՈՒՆԻ»

*Կ'ԸՍԷ ՍԵՐՊԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ*

Սերպիոյ նախագահ Ալեքսանտր Վուչիչ կոչ ուղղած է դադրեցնելու արցախեան-ազրպէյճանական հակամարտ զօրքերու շփման գիծին վրայ ընթացող զինուորական գործողութիւնները: «Արմէնփրես»-ի համաձայն, այս մասին կը հաղորդէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

Սերպական լրատուամիջոցներու հետ զրոյցի ընթացքին Ալեքսանտր Վուչիչ յայտարարած է, թէ խաղաղութիւնը այլընտրանք չունի:

«Մենք խաղաղութիւն կը ցանկանք, անոնք մեզի համար երկու եղբայրական եւ բարեկամական ժողովուրդներ են: Մենք անոնց կը ցանկանք այս ամէնը կարելի եղածին չափ արագ կասեցնել: Ձեւականութեան նման կը հնչէ, որ խաղաղութիւնը այլընտրանք չունի, սակայն հաւատացէք՝ խաղաղութիւնը ամէն ինչէն կարեւոր է: Մենք կը հաւատանք, որ մեր եղբայր ու բարեկամ հայերն ու ազրպէյճանցիները ատոր հասնելու ուժ պիտի գտնեն», ըսած է Վուչիչ:

## ՔԱՆԱՏԱ-ԱՐՑԱԽ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՐԹԸՐ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱԶՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Քանատայի Հայ դատի յանձնախումբը կը հաղորդէ, որ Քանատայի խորհրդարանի Քանատա-Արցախ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար եւ ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան անդամ Ռէյչըլ Հարթըր յատուկ գրառումով դատապարտած է Արցախի վրայ ազրպէյճանական յարձակումը:

Հարթըր իր դատապարտման կոչին մէջ կը նշէ, որ ազրպէյճանական զինեալ յարձակումները դիտաւորեալ կերպով ուղղուած են անմեղ քաղաքացիներու դէմ: Պահպանողական կուսակցութիւնը կը հաւատայ, որ տագնապին գծով զինուորական լուծումը անընդունելի է:

Ռէյչըլ Հարթըր նաեւ կը շեշտէ, որ Քանատա սատար կը հանդիսանայ Հելսինքիի համաձայնագիրի բանաձեւերուն վրայ հիմնուած ԵԱՀԿ-ի Մինսքի խըմբակի նախաձեռնութիւններուն, ներառեալ՝ շրջանի բնակչութեան ինքնորոշման իրաւունքը:

## *ՆԱԽԱԳԱՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. . . .*

**Շարունակուած Ա. էջէն**

Նախագահը յայտնած է, որ զօրքը հիւսիսային հատուածին մէջ յաջողութիւններ արձանագրած է, ու հաւաքուածներուն պատմած է Հաթերքի գումարտակի հրամանատարին հետ իր զրոյցի մասին, որուն մէջ խօսած են նաեւ Մռաւի սարերուն մէջ տիրող իրավիճակին մասին:

Արայիկ Յարութիւնեան վստահեցուցած է, որ պէտք է գիտակցինք, որ մեր կեանքէն կախուած է մեր ապագան, մեր սերունդներու ապագան, սերունդներու՝ Արցախի հողին մէջ ապրելու իրաւունքը ու արժանապատուութիւնը:

«Կ'ուզեմ համոզուած ըլլաք, որ մենք կանգնած ենք մինչեւ վերջ: Ժողովո՛ւրդ, մենք պիտի չխնդրենք զինադադար: Սա բոլորս պիտի իմանանք: Մենք պիտի պարտադրե՞նք զինադադար: Եթե մենք խնդրենք զինադադար, ատիկա պիտի ըլլայ Հայաստանի վախճանը, ոչ թէ Արցախի, որովհետեւ կը կռուինք ոչ թէ Ազրպէյճանի դէմ, դուք կը տեսնէք, Թուրքիոյ դէմ: Իսկ Թուրքիոյ համար հետաքրքրական չէ Արցախը, Ճապրայիլը, Լաչինը, Հորատիզը: Թուրքիոյ համար հետաքրքրական է Հայաստան աշխարհը, ամբողջութեամբ՝ իր համաթուրանական ծրագիրները իրականացնելու առումով: Ատոր համար բոլորս պիտի հասկնանք՝ մեր կեանքէն, մեր քայլէն, մեր ապրելու իրաւունքէն կախուած է մեր ապագան: Առաջին հերթին՝ ապրելու իրաւունքէն: Եւ պիտի փորձենք ապրիլ», ըսած է նախագահ Յարութիւնեան: